



**YEREVAN STATE UNIVERSITY
ENGLISH PHILOLOGY CHAIR**

ARMENIAN ASSOCIATION FOR THE STUDY OF ENGLISH

**LANGUAGE AND LITERATURE IN
THE CONTEMPORARY PARADIGM
OF SCIENTIFIC KNOWLEDGE**

SCIENTIFIC JOURNAL

9

Yerevan
“Lusakn”
2018

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՆԳԼԻԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ԱՆԳԼԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ

ԼԵԶՈՒՆ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԳԻՏԱԿԱՆ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

9

Երևան
«Լուսակն»
2018

Հանդեսը հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
The Journal is published by the decision of YSU Scientific Council

Գլխավոր խմբագիր՝ Ս. Գասպարյան, բ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ քրթակից անդամ,
ՀՀ Գիտության վաստակավոր գործիչ

Խմբագրական խորհուրդ՝

Ս. Տեր-Մինասովա, բ.գ.դ., պրոֆ.

Ա. Զորջի, բ.գ.դ., պրոֆ.

Ս. Հարությունյան, բ.գ.դ., պրոֆ.

Լ. Մաթևոսյան, բ.գ.դ., պրոֆ.

Ն. Հարությունյան, բ.գ.դ., պրոֆ.

Շ. Պարոնյան, բ.գ.դ., պրոֆ.

Գ. Մուրադյան, բ.գ.դ., դոց.

Գ. Հարությունյան, բ.գ.թ., դոց.

Լ. Կարապետյան, դոց. (պատասխ. քարտուղար)

Գ. Մադոյան, բ.գ.թ.

Editor-in –chief: S. Gasparyan, Doctor of Sciences (Philology), Prof., Corresponding
Member of RA NAS, Honoured Scientist of RA

Editorial Board:

S. Ter-Minasova, Doctor of Sciences (Philology), Prof.

A. Giorgi, Doctor of Philology, Prof.

S. Haroutyunian, Doctor of Philology, Prof.

L. Matevosyan, Doctor of Sciences (Philology), Prof.

Sh. Paronyan, Doctor of Sciences (Philology), Prof.

N. Haroutyunyan, Doctor of Sciences (Philology), Prof.

G. Muradyan, Doctor of Sciences (Philology), Associate Prof.

G. Haroutyunyan, Doctor of Philology, Associate Prof..

L. Karapetyan, Associate Prof. (executive Secretary)

G. Madoyan, Doctor of Philology

Լեզուն եվ գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում:
Գիտ. հանդես. – Եր.: Լուսակն, 2018. - 212 էջ. *Հանդեսը ընդգրկում է բանասիրա-
կան գիտելիքի հինգ հիմնական բնագավառ՝ լեզվաբանություն, լեզու. և մշակույթ,
թարգմանաբանություն, գրականագիտություն, նաև դասավանդման մեթոդիկա:*

Language and Literature in the Contemporary Paradigm of Scientific Knowledge.
Scientific Journal. – Yerevan: Lusakn, 2018. - 212 p. *The Journal covers five basic
spheres of philological knowledge: Linguistics, Language and Culture, Translation
Studies, Literature Studies, as well as Language Methodology.*

© Ս. Գասպարյան, 2018 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐԱԾԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԲԵՐԱԿԱՆ ԻՄԱՍՏԸ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ.....	8
<i>Նաիրա Մկրյան</i>	
ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ	15
<i>Աննա Կնյազյան</i>	
ԳԻՏԱՖԱՆԱՍՏԻԿԱՅԻ ՍԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	25
<i>Գայանե Մուրադյան</i>	
ԲՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՄԿՋԲԱՂԱՔՈՒՐ.....	32
<i>Ալինա Պետրոսյան</i>	
ԼԱՏԻՆԵՐԵՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՄԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԼԵԶՎՈՒՄ	40
<i>Արմենուհի Մարտիրոսյան, Մարինե Մկրտչյան</i>	
ԳՈՎԱԶԴԻ՝ ՈՐՊԵՍ ՀՈԳԵԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԷԹՆՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՐԵՎՈՒՅԹԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	47
<i>Ռուզաննա Առաքելյան, Գոհար Հարությունյան</i>	
ԵԶՐՈՒՅԹԻ ԵՎ ԲԱՌԻ ԳԻՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄՆ ՈՒ ԴԻԱՑ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	54
<i>Հասմիկ Ղաջոյան</i>	
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ՀԻՆԳ ՀՈՒՈՎԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՅԵՐԵՆԻ ՀՈՒՈՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՃՇԳՐԻՑ ԼԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԵՂԱՆԱԿ	63
<i>Աստղիկ Մխիթարյան</i>	
ԽՈՍՔԱՅԻՆ ԼԵՐԳՈՐԾՈՒՄԸ ԱՆԳԼԵՐԵՆ ԱՌՑԱՆՑ ԳՈՎԱԶՐԱՅԻՆ ՄԵԴԻԱՏԵՔՍՏԵՐՈՒՄ.....	69
<i>Համլետ Առաքելյան</i>	
ՆԱԽԱԾԱՆՑՆԵՐԻ ԶԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԻՏԱԼԵՐԵՆՈՒՄ, ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ	76
<i>Մարիամ Գևորգյան</i>	
ԳՈՑԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐՈՎ ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԲԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ.....	88
<i>Միրարփի Կարապետյան</i>	
ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	97
<i>Նարե Զորանյան</i>	

ՖԵՆՈՐՁԻ ՈՃԱԺԱՆՐԱՅԻՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԹՈՒՔԻՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	103
<i>Անի Տեր-Պետրոսյան</i>	

THE FUNCTIONAL INTERPRETATION OF OK? IN ACADEMIC DISCOURSE	111
<i>Nare Hakobyan</i>	

ЯЗЫКОВАЯ САМОИДЕНТИФИКАЦИЯ ГОВОРЯЩЕГО	123
<i>Марика Тонян</i>	

ԼԵԶՈՒ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՇՈՏԼԱՆԴԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐԶ	132
<i>Մարիանա Սարգսյան</i>	

ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՈՐՊԵՍ ԼԵԶՈՒ	146
<i>Հասմիկ Մկրտչյան</i>	

COMPARATIVE ANALYSIS OF THE PROVERBS WITH THE CONCEPT WOMAN IN ENGLISH AND ARMENIAN	153
<i>Jemma Militonyan</i>	

ԹԱՐԳՄԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԱՎՈՐ Ե ԲԱՆԱՎՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ	164
<i>Նարե Զաբաղյան</i>	

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՄԵՂԱՎՈՐ-ԱՆՄԵՂ ԵՐԿԱՏՈՒՄԸ Զ. ԶՈՅՄԻ «ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՐՎԵՍՍԱԳԵՏԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ» ՎԵՊՈՒՄ	172
<i>Արեգա Համբարձումյան</i>	

НЕКОТОРЫЕ ПСИХОЛОГИЧЕСКИЕ АСПЕКТЫ МАЛОЙ ПРОЗЫ Р.Л. СТИВЕНСОНА	179
<i>Наталья Гончар-Ханджян, Анаит Акопян</i>	

ТЕМА СМЕРТНОЙ КАЗНИ В РОМАНЕ Т.КАПОТЕ ХЛАДНОКРОВНОЕ УБИЙСТВО	188
<i>Наре Мкртчян</i>	

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՈՍԱԶՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵԴԻԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ	200
<i>Մարիամ Առաքելյան</i>	

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Մ. ԱՔԵՂՅԱՆԻ ՀԻՆԳ ՀՈՂՈՎԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՅԵՐԵՆԻ ՀՈՂՈՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՃՇԳՐԻՏ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԵՂԱՆԱԿ

Աստղիկ Մխիթարյան

Վաղարշապատի Մ. Գորկու անվան հ.5 ավագ դպրոց

Սույն հոդվածը ներկայացնում է Մ. Աբեղյանի «Հայերենի հինգ հոլովի տեսությունը» և հարցի պատմությունը: Առաջ են քաշված երկու լեզվաբանների՝ Մ. Աբեղյանի և Ս. Մալխասյանի կարծիքները խնդրի շուրջ և նախապատվությունը տրված է Մ. Աբեղյանի տեսակետին: Հոդվածն ուղղված է հատկապես հանրակրթական դպրոցների հայոց լեզվի ուսուցիչներին և նպատակ ունի դյուրինացնելու, մատչելի դարձնելու համապատասխան նյութի ուսուցումը:

Բանալի բառեր. *հինգ հոլով, հարցի պատմություն, քերականություն, բառի ձև, բառի իմաստ, վերջավորություն, հոլովում, քննադատություն, վեճ, դիմադրություն:*

Ներածություն

Հայերենի հինգ և յոթ հոլովների լեզվաբանական վեճն սկսվել է դեռևս անցյալ դարի սկզբներին: Լեզվաբաններն այդպես էլ չեն կարողանում ընդհանուր հայտարարի գալ, ու սա թերևս ամենաբուռն ու ծավալուն բանասիրական քննարկման թեման է մինչ օրս: Եվ քանի որ խնդիրը դեռևս լուծված չէ, ուստի դրա շուրջ քննարկումները մնում են լսելի և արդիական: Ի վերջո հարցը լուծում է ստանում պարզաբանումների արդյունքում:

Հարցի պատմությունից

Արևելահայերենի քերականության հիմնադիր Ստ. Պալասանյանն իր «Ընդհանուր տեսություն արևելահայ նոր գրական լեզվի հայոց» (Պալասանյան 1874) աշխատության մեջ արևելահայերենում յոթ հոլով է ընդունում՝ ուղղական, սեռական, տրական հայցական, բացառական, գործիական և ներգոյական: Հոլովական այս դրությունն արևելահայերենի համար մնում է մինչև 20-րդ դարի սկիզբը՝ մինչև Մ.Աբեղյանի քերականությունները:

Գրական աշխարհաբարի քերականական կառուցվածքի վերլուծության ճանապարհին պրոֆեսոր Մ.Աբեղյանը հանգում է **հինգ հոլովի** տեսության գաղափարին: Աշխարհաբարի՝ մինչև 1900-ական թվականներին լույս տեսած քերականություններում Աբեղյանը սեռական և հայցական հոլովների առկայությունը համարում է գրաբարի, մասամբ օտար լեզուների քերականությունների ազդեցության և մեխանիկական ընդօրինակման հետևանք, ուստի իր «Տարրական քերականություն» (Աբեղյան 1906) և «Աշխարհաբարի քերականություն» (Աբեղյան 1907) աշխատությունների մեջ դնում է միայն հինգ հոլով՝ սեռականն ու հայցականը համարելով արդեն ջնջված, վերացած հոլովներ:

Հանդիպելով յոթ հոլովին վարժված ուսուցչության դիմադրությանը՝ Մ.Աբեղյանը 1908 թ. «Արարատ» ամսագրում հանդես է գալիս իր հինգ հոլովի տեսությունն ու ուսուցումը հիմնավորող հողվածաշարով, որը լույս է տեսնում նաև առանձին գրքուկով՝ «Աշխարհաբարի հոլովները» (Աբեղյան 1908) վերնագրով: Այս փաստը, բնականաբար, անարձագանք ու անհետևանք չի անցնում: Մտ.Մալխասյանի՝ Աբեղյանի սկզբունքների դեմ ուղղված «Հայցական հոլովն աշխարհաբարի մեջ» (Մալխասյան 1908) հողվածով սկսվում է մի հետաքրքիր բանավեճ:

«Ի՞նչ է հոլով ասածը, - գրում է Աբեղյանը, - եթե ոչ հոլովելի **բառերի զանազան ձևերը**, որ կազմվում են մեծ մասամբ հոլովական վերջավորություններով: Այդ ձևերը ցույց են տալիս զանազան կախման հարաբերություններ՝ տեղի, ժամանակի պատճառի և այլն, որոնց իմաստով՝ անունն ու դերանունը խոսքի մեջ կապվում են մի ուրիշ բառի հետ: Այդ հոլովների մասին սովորեցնել կնշանակե երկու բան սովորեցնել. նախ՝ թե տրված բառը քանի տեսակ **ձև** և **հոլով** կարող է ունենալ, և որոնք են այդ ձևերը, և երկրորդ՝ թե ամեն ձև կամ հոլով ինչպիսի և քանի տեսակ կախման հարաբերություն կարող է ցույց տալ խոսքի կապակցության մեջ, ուրիշ խոսքով՝ որոնք են այս կամ այն հոլովի գործածությունները, որովհետև ամեն հոլով միայն մի տեսակ հարաբերություն ցույց չի տալիս, այլ մի քանի, երբեմն էլ՝ շատ» (Աբեղյան 1908):

Շարունակելով իր միտքը՝ Աբեղյանն ավելացնում է. «Միևնույն հոլովը կարող է գործածվել զանազան շարահյուսական հարաբերություններ ցույց տալու համար, բայց այդ պատճառով մի հոլովի մի ձևը չի դադարում միևնույն հոլովը մնալուց և չի դառնում երկու, երեք և ավելի հոլովներ: **Հոլովը ձևի վրա է հիմնված. չկա ձև, չկա և առանձին հոլով**» (Աբեղյան 1908):

Ըստ Մ.Աբեղյանի՝ հոլով ասածը հոլովելի բառերի՝ մեծ մասամբ հոլովական վերջավորություններով կազմված զանազան ձևեր են, որոնցով արտահայտվում են կախման, այսինքն՝ հոլովական զանազան հարաբերություններ: Եվ քանի որ ամեն հոլով ոչ թե մեկ, այլ շատ հարաբերություններ է ցույց տալիս, շատ իմաստներ ունի, ուստի հոլովը որոշելիս հիմնվում ենք ձևի վրա: **Հոլովը որոշում ենք ոչ թե իմաստով, այլ ձևով:**

«Հոլովները հինգն են, այսինքն՝ ամեն անուն (բայց ոչ դերանուն) կարող է հոլովվել հինգ ձևով: Մենք չունենք հայցականի համար առանձին ձև, չունենք ուրեմն և գրաբարի հայցական հոլովը: Քանի որ մեր սեռական ու տրական հոլովները ձևով միանգամայն նույնն են և մի ընդհանուր հոլով են կազմում ըստ ձևի, ապա և այդ երկու հոլովը մի միակ հոլով էլ պետք է դնել ձևաբանության մեջ» (Աբեղյան 1908):

Իբրև բացառություն և տրականից տարբեր ձևեր՝ մնում են անձնական դերանունների սեռականի ձևերը՝ ընդամենը ութ բառ (*իմ, քո, մեր, ձեր, իր, սրա, դրա, նրա*), որոնք էլ Աբեղյանի կողմից ճանաչվում են որպես **ստացական դերանուններ**, որպիսիք կան նաև Պալասանյանի և այլոց քերականություններում:

Վերջապես Աբեղյանը պարզաբանում է նաև այն հարցը, թե չորսի դիմաց պահպանված այդ երկու հոլովներն ինչո՞ւ պիտի ուղղական և տրական անվանվեն և կամ ինչո՞ւ պիտի հանվեն հենց սեռականն ու հայցականը:

Գրաբարի ուղղական և հայցական հոլովների դիմաց աշխարհաբարը պիտի պահի ուղղականը, քանի որ հայցականի ձևն է ջնջվել, և նրա պաշտոններն անցել են ուղղականի և տրականի ձևերին, այնուհետև ուղղական տերմինն ավելի հարմար է բառի ուղիղ ձևով արտահայտվող պաշտոնների հոլովն անվանելու համար:

Տրականը սեռական տերմինից նախընտրելի է հետևյալ պատճառներով.

1. Ըստ Մ.Աբեղյանի՝ ինչքան էլ հայցականը դուրս ձգվի, հոլովի իմաստով գործածությունը պիտի բացատրվի. մենք չենք կարող ասել, թե ներգործական սեռի բայերի խնդիրը դրվում է ուղղական և սեռական հոլովներով, այլ պիտի ասենք՝ ուղղական և տրական հոլովներով, որովհետև հայցականը նման է տրականին, այլ ոչ թե սեռականին:

2. Սեռականը մի հոլով է, որ դրվում է միայն գոյականի վրա:

3. Եթե ուղղական, բացառական և գործիական հոլովները կարող են բայի, ածականի և ավան լրացում լինել և միաժամանակ միևնույն հոլովը մնալ, ինչո՞ւ նույնը չենք կարող ասել և երկրորդ հոլովի համար: Ինչո՞ւ պիտի այդ հոլովն իբրև բայի լրացում տրական կոչվի, իսկ իբրև անվան լրացում՝ սեռական, և ոչ երկու դեպքում էլ՝ տրական: Մենք ոչ մի ուրիշ հիմք չենք տեսնում, քան այն, որ օտար լեզուներում (մասամբ և գրաբարում) այդ պաշտոնները կատարելու համար կան առանձին հոլովներ՝ առանձին ձևերով, իսկ մեր լեզվում այդպիսի առանձին ձևեր չկան:

4. Տրական հոլովն իր նշանակությամբ ցույց է տալիս մի խնդիր լրացում, որին տրվում, մատուցվում, մոտեցվում է մի բան, կամ փոխաբերաբար՝ ընծայվում, վերագրվում, վերաբերում, պատկանում, պատշաճում է մի բան (Աբեղյան 1908:59):

5. Վերջապես, ըստ պրոֆ.Աբեղյանի՝ տրակա՛նը պետք է պահել և ոչ սեռականը, քանի որ դերանունների մեջ մյուս հոլովները տրականից են կազմվում (*ինձ-իձ-նից,ինձնով, քեզ-քեզնից, քեզնով*) և ոչ թե սեռականից:

Մտ. Մալխասյանն իր «Հայցական հոլովն աշխարհաբարի մեջ» (Մալխասյան, 1908) հոդվածում հերքում է Աբեղյանի հինգ հոլովի տեսությունը՝ ասելով. «Հոլովը լոկ բառի ձև չէ... Հոլովը բառի այն փոփոխված ձևն է, որի հետ անբաժանելի կերպով կապված է հատուկ նշանակություն, ֆունկցիա: Եթե հոլովից անջատենք հոլովիչ տարրի ֆունկցիան, հոլով այլևս չի մնա: Դրա համար էլ հոլովներին տրված են անուններ՝ համապատասխան յուրաքանչյուրի էական ֆունկցիային. սեռական, երբ բառաձևը սերող ֆունկցիա է ստանում (հոր որդի), գործիական, երբ բառը գործիքի ֆունկցիա է ստանում (մեքենայով), ներգոյական, երբ բառը տեղի ֆունկցիա է ստանում (մեքենայում)» (Մալխասյան, 1908:8): Հոլովները որոշելու գործում հոլովական պաշտոնին կամ իմաստին նախապատվություն տալու համար Մալխասյանը բերում է հետևյալ օրինակը՝ *հոր որդին*: Ըստ նրա՝ այս կապակցության մեջ *հոր* բառը սեռական հոլով պետք է համարվի և ոչ այլ բան, քանի որ իր լրացյալի՝ որդու սերումն է ցույց տալիս: Եթե նույնիսկ մի կողմ թողնենք այն հանգամանքը, որ նման սերման, ծագման կիրառությունը սեռականի բազում կիրառություններից մեկն է միայն, դարձյալ չենք կարող չհամաձայնել Աբեղյանի այն պատասխանին, թե Մալխասյանի դատողությունը դառնում է անտրամաբանական, երբ *հոր որդին* շրջում են, դարձնում *որդու* հայրը: Այս անգամ սեր-

վողն է սեռականը և ոչ թե սերողը: Չէ՞ որ սեռական տերմինը ստուգաբանորեն սերման հետ կապ էլ չունի, այն սեռի տարբերակիչն է եղել և ոչ թե սերման: Մալխասյանը քննադատում է Աբեղյանին այն բանի համար, որ Աբեղյանը հոլովը դարձնում է սոսկ ձև, և որ սրա ձևերի ուսուցումն անջատում է հոլովական իմաստի՝ պաշտոնի ուսուցումից՝ վերջինս ամբողջությամբ թողնելով շարահյուսությանը: Մակայն իրականում այդպես չէ: Հոլովական ձևերի և ընդհանրապես լեզվական տարրերի ուսուցումն իբրև սոսկ ձևերի ոչ միայն աննպատակ է, այլև անհնարին: Աբեղյանն ինքն է ասում. «Սոսկ ձև ըմբռնումն անհեթեթություն է» (Աբեղյան 1908:73): Իր «Աշխարհաբարի քերականության» մեջ աշխարհաբարի հոլովման համակարգից հանելով հայցականն ու սեռականը և սրանց հոլովական պաշտոնները տալով ուղղականին ու տրականին՝ գրում է. «Ուղղական կոչվում է առաջին հոլովը, որովհետև գոյականի ուղիղ, անփոփոխ ձևն է, ինչպես՝ *հաց, ջուր, քաղաք*: Մյուս հոլովներն ուղղականի նկատմամբ ասվում են թեք հոլովներ, որովհետև թեքված, այսինքն՝ փոփոխված ձևով են հանդես գալիս: Ուղղական հոլովը լինում է ենթակա, կոչական և լրացում, իսկ թեք հոլովները՝ միայն լրացում:

Տրական հոլովը ցույց է տալիս գլխավորապես այն առարկան, որին մի բան տրվում, մատուցվում կամ մոտեցվում, ընծայվում, վերագրվում, վերաբերում, պատկանում է: Օր.՝ *Նա մոտեցավ ամբոխին: Տիգրանը փող տվեց մուրացկանին: Այս գործը վերագրվում է Չարենցին:*

Տրական հոլովը սեռական է կոչվում, երբ լրացնում է անվան և որոշում է, թե անվան ցույց տված ռ՝ մ կամ ինչի՞ է ընծայվում, վերագրվում, վերաբերում կամ պատկանում: Օր.՝ *այգու ծաղիկներ* ասելով հասկանում ենք ծաղիկներ, որ վերաբերում, պատկանում են այգուն, կամ *համալսարանի օրենք* ասելով հասկանում ենք մի օրենք, որը վերաբերում, պատկանում է համալսարանին» (Աբեղյան 1908:79):

Խոսելով հայցական հոլովի մասին՝ Ստ. Մալխասյանն այն համոզումն է արտահայտում, թե հայցական հոլովը, որքան էլ ձևով նման լինի ուղղականին կամ տրականին, ունի բոլորովին տարբեր ֆունկցիաներ: Եվ, շարունակելով իր պնդումը, Մալխասյանը գրում է. «Անկարելի է, աններելի է միևնույն հոլովով կոչել իրար հակասող ուղղականի և հայցականի ֆունկցիաները» (Մալխասյան 1908:10): Եթե այս թեզի կողմնակիցները հավատում են հոլովների իմաստային-ֆունկցիոնալ տարբերակման տեսության ճշմարտացիությանը, ինչո՞ւ իրենք չեն հետևում իրենց ասածին՝ տարբեր ու նույնիսկ հակադիր ֆունկցիաներ կատարող ուղղական, գործիական, բացառական հոլովները տրոհելով նոր հոլովների: Անգամ ներգոյական հոլովը տարբեր իմաստներ ունի, ու եթե սրբորեն հետևենք այդ իմաստներին, ապա ոչ թե յոթ, այլ միգուցե տասնյոթ հոլով էլ առաջանա...

Մալխասյանի վերջին առարկությունն այն է, թե Աբեղյանի առաջարկը՝ հայցականը հանելու մասին, վնասում է բառերի գործառնությունների ըմբռնման գործին և գցում քերականության գործնական, ճանաչողական արժեքը: Ըստ Մալխասյանի՝ «*Եթե մի որսորդ սպանեց մի աղվես, աղջիկը շունը տարավ խոսքերում որսորդ ,աղվես, աղջիկը, շունը* Աբեղյանի կարծիքով կոչենք ուղղական, իսկ *քեզ կտամ գիրքը և քեզ կտամ քո սիրած տղին* նախադասություններում *քեզ*-ը կոչենք տրական հոլով, ի՞նչ կշահենք. այն նշանավոր գիտակցությունը, թե *որսորդ և աղ-*

վես, աղջիկը և շունը ձևով իրար նման են, քեզն էլ = քեզ-ին, այսինքն՝ մի բան, որ առանց քերականության և առանց ուսուցչի էլ երեխան գիտե և գիտե շնորհիվ այն բանի, որ քերականություն չգիտե: Բայց ի՞նչ կկորցնենք, կկորցնենք այն բոլորը, ինչ որ քերականությունը պետք է տա գիտակցությանը՝ այդ բառերի տարբեր դերերի ճանաչողությունը» (Մալխասյան 1908:11):

Թվում է, թե շատ ճիշտ է ասված, բայց ահա թե ինչ է պատասխանում Աբեղյանը. «Ի՞նչ է կարծում պարոն Մալխասյանը, արդյոք, երբ ասում ենք՝ *Պատավի հավը ձու ածեց*, մի՞ թե երեխան առանց քերականության և առանց վարժապետի չգիտե, թե ձու ածողը հավն է և ոչ պառավը, թե հավը պառավին է և ոչ պառավը՝ հավինը, թե ածածը հավը չէ, այլ ձուն է: Մի՞ թե երեխան առանց քերականության չի հասկանում բառերի տարբեր դերերը: Եթե այդպես լիներ, մարդիկ, առանց քերականություն սովորելու, իրար չէին հասկանալ» (Աբեղյան 1908:81):

Աբեղյանի հինգ հոլովի տեսության երկրորդ քննադատությունն սկսվեց 20-րդ դարի 30-ական թվականներին՝ Ա. Ղարիբյանի և Գ. Սևակի կողմից: Նրանք ևս ելնում էին այն դրույթից, որ հոլովները սուսկ ձևով որոշվել չեն կարող: Ձևի հետ միասին պետք է հաշվի առնվեն նաև հոլովական ձևերի արտահայտած իմաստները: Ընդունելով ավանդական յոթ հոլովի առկայությունը արևելահայերենում, սակայն, նրանք ևս ընկնում են հակասության մեջ և չեն կարողանում մինչև վերջ հետևողականորեն կիրառել ձևի և իմաստի միասնության հաշվառումը հայերենի հոլովները որոշելիս:

Եզրակացություն

Իհարկե կարելի է օրինակներ գտնել, որոնցում հոլովի իմացությունն ու նախնական ճանաչումը նպաստում են բառի կիրառության կամ գործառնության ճիշտ որոշելուն և ըմբռնելուն: Բայց եթե մենք սովյալ բառի գործառնությունը չգիտենք և ուզում ենք օգնության կանչել նրա հոլովը, ի՞նչ հատկանիշով պիտի որոշենք այդ հոլովը, եթե ոչ՝ ձևով: Մի նկատառում ևս. 7-րդ դասարանի երեխան, որ դեռևս շարահյուսություն չի անցել, ինչպե՞ս հասկանա այս խառնաշփոթը, և կամ ուղղականաձև, տրականաձև հայցական ու նման քառասյին արտահայտություններով ո՞ր աշակերտին լեզուդ սիրել կտաս: Վերջապես մնացած լեզուներում ևս հոլովների քանակը որոշվում է հենց բառի ձևով: Ուրեմն եկեք ընդունենք միայն այն հոլովները, որոնք ունեն սեփական ձև: Իսկ դրանք հայերենում հինգն են՝ ուղղական, տրական, բացառական, գործիական ներգոյական:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղյան, Մ. (1908) *Աշխարհաբարի հոլովները*. Վաղարշապատ:
2. Աբեղյան, Մ. (1906) *Աշխարհաբարի քերականություն*. Վաղարշապատ:
3. Մալխասյան, Ստ. (1908) *Հայցական հոլովն աշխարհաբարի մեջ*. Թիֆլիս, Նոր դպրոց:
4. Պալասանյան, Ստ. (1870) *Ընդհանուր տեսություն արևելահայ նոր գրական լեզվի հայոց*. Թիֆլիս:

M. Abeghyan's Theory of Five Cases as a Method Precisely Presenting The Armenian Case System

The article focuses on M. Abeghyan's theory of five cases in the Armenian language and the history of the problem. With reference to the problem two opinions of famous linguists M. Abeghyan & S. Malkhasyan have been considered thoroughly, and preference is given to M. Abeghyan's viewpoint. The article is especially addressed to teachers of comprehensive schools with an aim to facilitate the teaching of the material under study.

М. Абегиана - адекватное отражение падежной системы армянского языка

Статья посвящена «Теории пяти падежей армянского языка» М. Абегиана и ее истории. В ней представлены точки зрения двух лингвистов – С. Малхасяна и М. Абегиана и дано предпочтение точке зрения М. Абегиана. Статья адресована преподавателям армянского языка общеобразовательных школ. Цель статьи – облегчить процесс обучения и способствовать освоению соответствующего материала.

Մեր հեղինակները

Ալինա Պետրոսյան – ԵՊԲՀ օտար լեզուների ամբիոնի դասախոս, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ alina.petrosyan@yahoo.com

Անահիտ Հակոբյան – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝
anahit.hakobyan1988@yandex.ru

Անի Տեր-Պետրոսյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ aniterpetrosyan@ysu.am

Աննա Կնյազյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.դ.
Էլ. հասցե՝ annaknyazyan@ysu.am

Աստղիկ Մխիթարյան – Վաղարշապատի Մ.Գորկու անվան հ.5 ավագ դպրոցի ուսուցչուհի
Էլ. հասցե՝ asto7@rambler.ru

Արեգա Համբարձումյան – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ orbisenglish@gmail.com

Արմենուհի Մարտիրոսյան – ԵՊՀ դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի ասիստենտ
Էլ. հասցե՝ arm.martirosyan@ysu.am

Գայանե Մուրադյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.դ.
Էլ. հասցե՝ g.murad@ysu.am

Գոհար Հարությունյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ goharharutyunyan@ysu.am

Համլետ Առաքելյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ hamlet.araqelyan@gmail.com

Հասմիկ Ղաջոյան – ՀԱՊՀ օտար լեզուների ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ hasmikghajoyan@mail.ru

Հասմիկ Մկրտչյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ hasmikmkrтчyan@ysu.am

Մարիամ Առաքելյան – ՀՊՄՀ օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ
Էլ. հասցե՝ mariamarakelyan89@mail.ru

Մարիամ Գևորգյան – ԵՊԼՀ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ miriamgevorgian@gmail.com

Մարիանա Սարգսյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ marianasargsyan@ysu.am

Մարիկա Տոնյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ marikatonyan@ysu.am

Մարինե Մկրտչյան – ԵՊՀ դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ m.mkrтчyan@ysu.am

Նաիրա Մկրտչյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ nairamkryan@ysu.am

Նատալյա Գոնչար-Խանջյան – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ natalie.goncharkhanjyan@ysu.am

Նարե Հակոբյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ narekaytser@gmail.com

Նարե Մկրտչյան – Հայ-Ռուսական (Մլավոնական) համալսարանի արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ mkrtchyan.nare@gmail.com

Նարե Չոբանյան – ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ nare.chobanyan@gmail.com

Նարե Ջաբաղյան – ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ narejabaghyan@ysu.am

Ջեմմա Միլիտոնյան – ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի անգլերեն լեզվի և գականության ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ jemmamilitonyan@yandex.com

Ռուզաննա Առաքելյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, Բ.գ.թ.
Էլ. հասցե՝ ruzanna.arakelyan@ysu.am

Միրարփի Կարապետյան – ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի դասախոս, Բ.գ.թ.
Էլ. հասցե՝ sirarpikarapetyan@ysu.am

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում» գիտական հանդեսը լույս է տեսնում տարին մեկ անգամ: Հանդեսում տպագրվելու համար կարող են ներկայացվել հոդվածներ հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով **Sylfaen** տառատեսակով, լուսանցքները՝ 2 սմ, վերնագիրը՝ 14 տառաչափով (աջ կողմում, գլխատառերով, թավատառ), հիմնական տեքստը և ենթավերնագրերը (ձախ կողմում, թավատառ), հեղինակի անուն, ազգանունը (աջ կողմում, թավատառ), աշխատավայրը (աջ կողմում, շեղատառ)՝ 12 տառաչափով, բոլոր տողերի միջև տարածությունը՝ 1.5: Հոդվածին անհրաժեշտ է կցել հայերեն, անգլերեն և ռուսերեն ամփոփագրեր՝ 60-80 բառի սահմաններում, 7-10 բանալի բառեր (հիմնական տեքստի լեզվով), հեղինակի մասին համառոտ տեղեկություն՝ աշխատավայր, կոչում, պաշտոն, էլ. հասցե, հեռախոսահամար (հայերեն):

- Տեքստը բաժանել հետևյալ մասերի՝ ներածություն, ենթաբաժիններ և եզրակացություն:
- Այլ հեղինակների մեջբերումները՝ չակերտների մեջ, որպես տեքստի շարունակություն /եթե կարճ է/ կամ նոր տողից /եթե երկար է/:
- Այլ հեղինակների աշխատությունների վերնագրերը՝ չակերտների մեջ:
- Փաստացի օրինակները՝ շեղատառ, առանց չակերտների: Եթե օրինակները ներկայանում են մեկից ավելի նախադասություններով, առանձնացնել տեքստից՝ վերևում և ներքևում թողնելով մեկական տարածություն: Օրինակի մեջ ուշադրության արժանի բառերը կամ բառախմբերը ներկայացնել թավատառ:
- Տեքստում աղբյուրը ներկայացնել հետևյալ ձևով՝ փակագծերում տալ հեղինակի ազգանունը և հրատարակչության տարեթիվը: Եթե մատնանշվում է էջը՝ տարեթվից հետո դնել հայկական վերջակետ, նշել էջը: Օրինակ՝ (Svartvik 2005) կամ (Bronfen 1992:330):
- Ծանոթագրությունները՝ հոդվածի վերջում, գրականության ցանկից առաջ:
- Գրականության ցանկը ներկայացնել **այբբենական կարգով**՝ խստիվ հետևելով ներքոնշյալ կանոններին՝
հեղինակի ազգանունը, անվանատառերը, (հրատարակման թվականը), աշխատանքի վերնագիրը (շեղատառերով, առանց չակերտների), հրատարակման վայրը, հրատարակչությունը, հայկական վերջակետ:

Օրինակներ՝

- 1.Ջահուկյան, Գ.Բ. (2003) *Շարահյուսական ուսումնասիրություններ*. Երևան: Ստոդիկ հրատարակչություն:
- 2.Eisenstein, E.L. (1979) *The Printing Press as an Agent of Change*. Cambridge: CUP.
- 3.Myer, T. (1997) *The Language of Science*. Available at: <<http://www.sfsite.com>> [Accessed June 2012]
- 4.Redbury, M. (2003) *Language and Discourse*. // Investigations in Linguistics. / Ed. by R.K. Smith. New York: Redgate Inc.
- 5.Svartvik, J. (2005) *A Life in Linguistics*. // The European English Messenger. / Ed. by J.A. Stotesbury. Vol.14 (1). Portugal: Grafica de Coimbra.
- 6.(1998) *Oxford Advanced Learner's Dictionary of Current English*. Oxford: OUP.

- Հոդվածի էլեկտրոնային տարբերակը ուղարկել afajournal@ysu.am էլ. հասցեին:

Հասցե՝ ՀՀ, Երևան-0025, Ալեք Մանուկյան 1,
Երևանի պետական համալսարան
Հեռախոս՝ (+374 60) 710 546
Էլ. հասցե՝ sedagasparyan@ysu.am, afajournal@ysu.am

«ԳԵՎՈՐԳ - ԳՐԱՅՐ» ՍՊԸ



Հրատարակչություն
Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:
Հեռ.՝ (011) - 52.79.74, 055-52.79.74
Էլ. փոստ lusakn@rambler.ru